

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

1. Համայնքի ղեկավարը, ապահովելով համայնքի տարածքում պետական, մշակութային քաղաքականությունը՝ իրականացնում է.

Կրթամարզամշակութային համալիրի (ԿՄՄՀ) գործունեությունը: ԿՄՄՀ-ն իր մեջ ներառում է «Մայրասար» և «Անի» պարային համույթներ, նկարչության, ասեղնագործության, կավագործության բաժիններ, դիմի խմբակ, գրադարան, նախակրթարան, ըմբշամարտի, խմբեր:

2. Կազմակերպում և կառավարում է դրանց գործունեությունը, իրականացնում դրանց շահագործման և նորոգման աշխատանքները:

Պարային համույթներ հաճախում են 25-30 երեխաներ, Գեղանկարչության բաժնում սովորում են 10 երեխաներ, դիմի խմբակում՝ 5-7, ըմբշամարտի խմբակում՝ 36 մարզիկ:

Պարային համույթները իրենց բարձրակարգ ելույթներով հանդես են գալիս համայնքում և մարզում կազմակերպվող հանդիսություններին, մասնակցում հանրապետական և մարզային մրցույթ-փառատոների, արժանանալով բարձր մրցանակների և պատվոգրերի:

- Համայնքի Գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 8859 գիրք:

2016թ. գրքային ֆոնդը ՀՀ մշակույթի նախարարության կողմից համալրվել է 108 կտոր գրքով:

Թվով 484 ընթերցողի տրամադրվել է 8917 հազարից ավել գրականություն: Աշխատողների թիվը՝ 1, կազմակերպված միջոցառումների թիվը՝ 12 /Ազգային, պետական և եկեղեցական տոներ/, գրական-երաժշտական ցերեկույթներ, գրքային ցուցահանդեսներ:

- Նոր ստեղծվող ցուցասրահ-արվեստանոցում առկա է շուրջ 50 միավոր ցուցանմուշ, որոնց մի մասն ունեն տեղական, մի քանի ցուցանմուշներ՝ հանրապետական նշանակություն:
- Կիրակնօրյա վարժարան հաճախում են 17 երեխաներ:
- Ըմբշամարտի խմբակ են հաճախում 28 մարզիկներ, ովքեր մասնակցելով հանրապետական, մարզային և այլ մրցելույթների, բարձր են պահում համայնքի մարզական պատիվը:

3. Համայնքի ղեկավարությունը, Լեհաստանի դեսպանության հետ համատեղ իրականացրել է ծրագիր՝ Կրթամարզամշակութային համալիրին հատկացվել է անհրաժեշտ գույք և գործիքներ: Կահավորվել է համալիրի պարի սենյակը, տրամադրվել է կավագործության համար անհրաժեշտ բոլոր պարագաները, 2 կարի մեքենա և ասեղնագործության համար պարագաներ:

4. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում գյուղապետարանը կազմակերպում է մասսայական միջոցառումներ Հայաստանի Հանրապետության պետական տոների՝ Անկախության, Առաջին Հանրապետության, Հաղթանակի, Ազգային բանակի օրերի, ինչպես նաև Եղեռնի ու Երկրաշարժի զոհերի հիշատակության օրերի առթիվ: Բացի վերը նշվածը, հաճախակի կազմակերպվում են մեծարման երեկոներ, նոր գրքերի քննարկումներ, հետաքրքիր հանդիպումներ անվանի մարդկանց հետ, ինչպես նաև ժամանցային միջոցառումներ:

5. Նպատակային աշխատանքներ են կատարվում համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության ոլորությամբ: Մշտապես իրականացվում են դրանց տարածքների սանիտարական մաքրումներ և ընթացիկ բարեկարգումներ համայնքի դպրոցականների և այլ կազմակերպությունների միջոցով: Մասնավորապես՝

ա/ նորակառույց Մբ.Հակոբ եկեղեցի

բ/ Ազատամարտիկների պուրակում հուշաղբյուր, նվիրված երկրորդ աշխարհամարտում զոհված զինվորներին

գ/ Ազատամարտիկների պուրակում խաչքար, նվիրված հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին

դ/ Ազատամարտիկների պուրակում խաչքար, նվիրված Արցախյան գոյամարտի զոհերի հիշատակին

ե/ ՀՀ Անկախությանը նվիրված հուշարձան - հուշաղբյուր, համայնքի մուտքի տարածքում

զ/ Մբ. Հակոբ եկեղեցու հարակից տարածքում որմնանկար-խճանկար՝ «Հայաստանի քարտեզը նոան մեջ»

է/ «Թեժ Լեռ» տարածքում խաչքար, նվիրված զոհված սկաուտների հիշատակին:

6. Համայնքը մշտական ուշադրություն է դարձնում ժող. ստեղծագործունեության և գեղարվեստական ինքնագործունեության, ազգային արհեստների պահպանմանն ու զարգացմանը:

Համայնքի կողմից մշտապես խրախուսվում են ցուցահանդեսների մասնակից վարպետները և ինքնուս ստեղծագործողները:

7. Գյուղապետարանի կողմից վերահսկվում է Կրթամարզամշակութային համալիրի աշխատանքային գործունեությունը

- ամենամյա և ընթացիկ հաշվետվությունները,
- աշխատանքային ծրագրերը:

8. Համայնքը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի համաձայն աջակցել և աջակցում է համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանության գործին:

9. Համայնքի վարչական տարածքում շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների կատարման ժամանակ հուշարձաններ չեն հայտնաբերվել:

10. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում գյուղապետարանի կողմից ապահովվում է համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարումը:

11. Գյուղապետարանի կողմից հուշարձանի պահպանական գոտում հողի, համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի և շինությունների վարձակալությամբ տրամադրելու կամ սեփականության կարգով վաճառքի դեպքեր չկան, ուստի օգտագործողների հետ հուշարձանների պահպանության պայմանագրերի կամ պարտավորագրերի կնքման անհրաժեշտություն չկա:

Տեղեկույթը՝ Մհեր Մելիքյանի

03.05.2017թ.